



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 26 » _____ 10 _____ 2020թ.

№ 08/ԼԱ/-470

Հոկտեմբերի 19-ից 25-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Հոկտեմբերի 21-ին առանձին շրջաններում դիտվել է անձրև և ամպրոպ: Տեղումների գումարային առավելագույն քանակը գրանցվել է Պուշկինի լ/ք-ում՝ 12մմ, Ստեփանավանում՝ 11մմ, Վանաձորում՝ 10մմ, մնացած շրջաններում՝ մինչև 1-9մմ քանակությամբ: Մնացած օրերին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի միջին օրական ջերմաստիճանը հոկտեմբերի 19-ին և 25-ին եղել է նորմայից բարձր 3-4 աստիճանով, 20-21-ին, 24-ին՝ 2-3, 22-23-ին՝ 1-2 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը գրանցվել է հոկտեմբերի 19-ին. Արարատյան դաշտում, Վայոց Ձորի և Արագածոտնի նախալեռներում, Տավուշում, Լոռիում, Սյունիքի հովիտներում՝ դիտվել է $+23...+28^{\circ}\text{C}$ (Թալինում՝ $+20^{\circ}\text{C}$), Շիրակում, Գեղարքունիքում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի լեռներում, Սյունիքի նախալեռներում՝ $+18...+23$ աստիճան տաքություն (Ամբերդում՝ $+17^{\circ}\text{C}$, Գորիսում՝ $+25^{\circ}\text{C}$):

Ամենացածր ջերմաստիճանը շաբաթվա ընթացքում գրանցվել է հոկտեմբերի 25-ին. Շիրակում, Գեղարքունիքում, Արագածոտնի, Վայոց Ձորի և Կոտայքի լեռներում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ $-1...+4$ °C (Աշոցքում՝ -6°C , Սիսիանում, Ծաղկահովիտում՝ -2°C , Օձունում՝ $+5^{\circ}\text{C}$), Տավուշում, Կոտայքի, Արագածոտնի և Վայոց Ձորի նախալեռներում, Արարատյան դաշտում, Սյունիքի հովիտներում՝ $+4...+9^{\circ}\text{C}$ (Դիլիջանում՝ $+2^{\circ}\text{C}$):

Շաբաթվա ընթացքում հանրապետության գետերում բնական էական փոփոխություններ չեն դիտվել:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում իջել է 1սմ-ով և կազմել՝ 1900.61 մ (25.10.20թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 7 սմ-ով:

Հարգանքով՝
Տնօրենի ժ/պ

Լ.Ազիզյան